



ՄԱՅՐ ԵՐՈՒՆ

ՈՐՊԷՍ ՋԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԶՄԵՌՆԻՆ...

Ամէն անգամ որ երեխայ մը փորհարութենէ մեռնի (Ֆրանսայի մէջ տարեկան 100000 հազար երեխայ կը մեռնի այս հիւանդութեամբ), պատճառը գրեթէ միշտ մօր ՏԳԻՏՈՒԹԻՒՆԸ կամ անոր ԱՆՀՈՒՈՒԹԻՒՆԸ է:

Կամ ՇԱՏ ՄԵՆՈՒՆԴ (կաթ) տուած է:

Կամ զայն ԱՆՆՆԱՄ թողած է:

ՄՕՐ ԿԱԹԸ ԵՐԵՒԱՅԻՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ, այսինքն ամէն մայր պարտաւոր է իր կաթով սնուցանել իր երեխան, որովհետեւ մօր կաթը ամէնէն լաւ ու յարմար սնունդն է մանկան համար:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴԻԵՏՈՒՄԻ, (կաթնաշիշով, ծծակով կաթնատուրութիւն) գիմնցէք, բժիշկին խորհուրդով, երբ մօր կաթով գիեցուծմը անկարելի է:

Այս պարագային պէտք է՝

ԿԱԹ ՏԱԼ

— ԺՈՒՄՈՎ, այսինքն երբորդ շաբաթէն սկսեալ, երեք ժամը անգամ մը և ոչ աւելի:

(Գիշերուան ժամը 10էն մինչեւ առաւօտեան ձը, երեխան քունի պէտք ունի, եւ ոչ սնունդի: Եթէ լայ, կամ տակը աղտոտած է, կամ կը նեղուի, կամ ցաւ մը ունի: Եթէ բան մը չունի, Թողէ որ լայ. Գետգիտէ լռելու կը վարժուի):

— ԵՌԱՅԱՆ ԿԱԹ, եռացած և շաքարախառն ջրով կտրած:

— ԿԱԹՆԱՇԻՇԻ ՄԸ ՄԷՋ (պիպրոս) որ ըլլայ չափուած, (որուն վրայ կրամով նշանակուած ըլլան զանազան չափերը), եւ մաքուր, այսինքն եռացած ջուրով լուացուած. (եթէ կաթնաշիշը նախապէս տախտակի մը վրայ դնէք ու յետոյ եռացած ջուր լեցնէք մէջը, չի կոտրիր):

— ԾԾՈՒՆՎ ՄԸ (էմպիկ), որ ըլլայ կակուղ, այսինքն գիւրտ հակառակ կողմը դարձուի լուայու համար, եւ մաքուր, այսինքն եռացած:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Գէշ եռացած կաթը

ԿՐՆԱՆ

Գէշ մաքրուած

ԵՐԵՒԱՆ

կաթնաշիշը

Գէշ լուացուած

ծծօնը

ՄԵՌՅԵՆԸ

ՈՒՇԱՆԻՐՈՒԹԻՒՆ

Ջուրին «երգելը», թէ մէկը և թէ
կաթին «ելլելը», միւսը, 10 վայր-
չեն նշանակեր կեան շարունակ
թէ անոնք պէտք է եռան եփ
եռացած են. ելլելէն վերջ,

ՀԱՒԱՏԱՑԻՔ ԹԷ,

սեղմուած և վարի մասը գոց խան-
ձարուր մը (գունտաք), մանուկին հա-
մար տանջանքի գործիք մըն է:

ՄԻ ՄՈՌՆԱՔ ՈՐ,

մանուկը լողցնելու համար փոքր ա-
ման մը կը բաւէ: (Ջուրին ջերմութիւն
նը նայելու համար պէտք է արմուկը
դնել և ոչ թէ ձեռքը):

ՎՍՏԱՀ ԵՂԷՔ ՈՐ,

կշիռը երեխային խօսքն է: Կշռելով
միայն կրնաք հասկնալ թէ, երեխան
որքան կ'օգտուի իր սնունդէն:

ՄԱՆՈՒԿԻՆ ՏՐՈՒԵԼԻՔ

ԿԱԹԻՆ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԵՐԸ

(Միջին չափեր. ի հարկին՝ փոփոխելի, բժիշկին խորհուրդով)

1րդ շաբաթ	30 կրմ.	4րդ օրէն սկսեալ	Երկու բաժին կաթ
2րդ »	45 »	24 ժամուայ մէջ	և մէկ բաժին շա-
3րդ »	60 »	8 անգամ	քարախառն եռացած
4րդ »	80 »	2½ ժամը անգամ մը	ջուր
2րդ ամիս	90 »	7 անգամ	Երեք բաժին կաթ
3րդ »	100 »	2½ ժամը անգամ մը	մէկ բաժին եռացած
4րդ ամիս	110 »		ջուր և շաքար
5րդ »	115 »	6 անգամ	
6 և 7րդ »	155 »	3 ժամը անգամ մը	Չուտ կաթ և շաքար
8 և 9րդ ամիս	165 »	6 անգամ	
		3 ժամը անգամ մը	Չուտ կաթ և շաքար
		5 անգամ	
10, 11 և 12րդ	200 »	3 ժամը անգամ մը	

վերջին երեք ամիսներուն, եթէ երեխային կշիռը չաւելնայ,
կարելի է օրական նախ մէկ, յետոյ երկու խաւիժ (չափա) տալ:

Երբ մանուկին կղկղանքը գոյն փոխէ եւ դառնայ կանաչ, փոր-
հարութիւնն է որ կը սկսի:

Պէտք է անմիջապէս դադրեցնել կաթը, տալ շաքարախառն եռա-
ցած ջուր և կանչել բժիշկը:

Դիւրաւ կը բուժուի, եթէ ուշադիր ըլլաք. հակառակ պարագային
մահացու է: